

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

պետական համալսարան» ՊՈԱԿ-ի

ռեկտորի 28.12.2015 թ. թիվ 1030 Լ/Կ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԲԱԺՆԻ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 9 24.12.2015թ.

Վանաձոր

2015թ.

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) կրթական բարեփոխումների բաժնի (այսուհետ՝ Բաժնի) կանոնադրությունը սահմանում է Բաժնի կազմակերպչական և մեթոդական հիմքը և նրա գործառույթները, իրավասությունը, կառավարումը, Համալսարանի ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները, ինչպես նաև Բաժնի կազմավորման, վերակազմակերպման և լուծարման կարգը:

Ընդհանուր դրույթներ

1. Բաժինը Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումն է և անմիջականորեն ենթարկվում է Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

2. Բաժինը իր գործունեության մեջ առաջնորդվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կրթության և գիտության նախարարության նորմատիվային փաստաթղթերով, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի գիտխորհրդի որոշումներով, ռեկտորի հրամաններով և սույն կանոնադրությամբ:

Բաժնի գործառույթները և իրավասությունը

3. Բաժնի գործառույթներն են՝

- Բոլոնյան սկզբունքներին համահունչ բարձրագույն կրթության ոլորտում ՀՀ-ում և ԱՊՀ երկրներում իրականացվող կրթական բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվական նյութերի հավաքագրում և վերլուծություն,

- Համալսարանի կրթական ծրագրերի բարեփոխման, նոր ծրագրերի ներդրման համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակում,

- Համալսարանի կրթական գործընթացին վերաբերող փաստաթղթերի՝ կարգերի, ուղեցույցերի, տեղեկագրքերի, այլ անհրաժեշտ նյութերի մշակում և ներդրում:

4. Բաժինն իր գործառույթների իրականացման նպատակով իրավասու է համագործակցելու Համալսարանի բոլոր ստորաբաժանումների հետ ինչպես Բաժնի պետի, այնպես էլ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի միջոցով:

Բաժնի կառավարումը

5. Բաժնի աշխատանքներն անմիջականորեն ղեկավարում է Բաժնի վարիչը, որը նշանակվում է պաշտոնում և ազատվում է պաշտոնից ռեկտորի հրամանով:

6. Բաժնի աշխատակիցների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը բխում են Բաժնի նպատակներից, խնդիրներից և գործունեության ուղղություններից և ամրագրվում են պաշտոնի և աշխատանքի նկարագրերով (աշխատանքային գործառույթներով):

Բաժնի կազմավորման, վերակազմակերպման և լուծարման կարգը

7. Բաժինը կազմավորվում, վերակազմակերպվում և լուծարվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշման հիման վրա՝ ռեկտորի հրամանով: